



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի առաջին եռամսյակում (վերլուծություն)

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 35946 գործարք, որոնց քանակը 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.3 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 6.3 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9562 օտարման գործարքի 69.8 %-ը կազմել է առուվաճառքը, 29.7 %-ը՝ նվիրատվությունը և 0.5 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.4 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի առաջին եռամսյակում, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 23.8 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 8.5 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.5 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի առաջին եռամսյակում, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 22.3 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 11.1 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Առաջին եռամսյակ 2016 թ.	Առաջին եռամսյակ 2017 թ.	Չորրորդ եռամսյակ 2016 թ.
Կենտրոն	428000	428250	428250
Արաբկիր	356900	357300	357400
Քանաքեռ-Զեյթուն	283000	279200	283300
Նոր Նորք	253800	252600	254400
Ավան	261400	259500	262000
Էրեբունի	252300	248300	252500
Շենգավիթ	257500	254300	258050
Դավթաշեն	276450	273200	277100
Աջափնյակ	250750	249000	251400
Մալաթիա-Սեբաստիա	243850	241000	244300
Նուբարաշեն	157100	157700	157600
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	274600	272800	275100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 0.8 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 844 բնակարան, որի քանակը, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 17.9 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 1.9 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Առաջին եռամսյակ 2016 թ.	Առաջին եռամսյակ 2017 թ.	Չորրորդ եռամսյակ 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	114700	116200
	Ապարան	58200	58800	58900
	Թալին	66600	65700	66900
Արարատ	Արտաշատ	98600	98100	99200
	Մասիս	115800	114800	115800
	Վեդի	101600	101650	101750
	Արարատ	77300	77850	77750
Արմավիր	Վաղարշապատ	154200	154100	154200
	Արմավիր	121200	121150	121250
	Մեծամոր	87600	87000	87600
Գեղարքունիք	Սևան	99400	95600	99400
	Գավառ	60400	60200	60800
	Մարտունի	107700	105500	107700
	Վարդենիս	45100	45400	45400
	Ճամբարակ	28750	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	88600	88600
	Ստեփանավան	74700	74900	74900
	Սպիտակ	99850	98300	99950
	Ալավերդի	55500	55950	55950
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	20500	20500
Կոտայք	Աբովյան	155100	154400	155150
	Նոր Հաճն	128550	128000	128550
	Բյուրեղավան	108200	106500	108250
	Եղվարդ	109650	109400	110000
	Հրազդան	63900	63300	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	84700	85500
Շիրակ	Գյումրի	109300	109400	109450
	Արթիկ	67100	67500	67400
	Մարալիկ	40950	41150	41150
Սյունիք	Գորիս	123500	124200	124100
	Կապան	94800	95900	95700
	Սիսիան	92100	91900	92400
	Մեղրի	82800	84000	83600
	Քաջարան	94700	95400	95000
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	94400	95100
	Եղեգնաձոր	126000	126450	126500
	Ջերմուկ	113100	112800	113300
Տավուշ	Դիլիջան	115300	115100	115700
	Իջևան	118500	117400	118600
	Բերդ	60400	60600	60600
	Նոյեմբերյան	50300	50600	50500
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2017 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 0.6 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 917 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 261 գործարք, մարզերում՝ 656 գործարք: 2017 թվականի առաջին եռամսյակում, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 24.5 %-ով, ընդ որում, Երևանում՝ 23.2 %-ով, մարզերում՝ 24.9 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ աճել 5.7 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 6.3 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Առաջին եռամսյակ 2016 թ.	Առաջին եռամսյակ 2017 թ.	Չորրորդ եռամսյակ 2016 թ.
Կենտրոն	476100	476350	476350
Արաբկիր	383000	383100	383200
Քանաքեռ-Զեյթուն	295000	293500	295300
Նորք-Մարաշ	319200	315400	319500
Ավան	270500	269000	270750
Էրեբունի	239750	239600	239900
Շենգավիթ	255000	252000	255150
Դավթաշեն	276000	274000	276200
Աջափնյակ	250050	249500	250300
Մալաթիա-Սեբաստիա	238000	238100	238200
Նուբարաշեն	150800	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	285600	286900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 0.5 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ

շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Առաջին եռամսյակ 2016 թ.	Առաջին եռամսյակ 2017 թ.	Չորրորդ եռամսյակ 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	135800	136250
	Ապարան	60050	60000	60050
	Թալին	69250	68800	69250
Արարատ	Արտաշատ	100000	100100	100100
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153150	153150
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94950	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96200	96200
	Վարդենիս	41100	41150	41150
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100800	100600	100900
	Ստեփանավան	91100	90800	91200
	Սպիտակ	114000	113700	114050
	Ալավերդի	50200	50300	50300
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157300	157350	157350
	Նոր Հաճն	129800	129500	129800
	Բյուրեղավան	120500	119700	120500
	Եղվարդ	116100	115400	116100
	Հրազդան	82600	81400	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	82000	83000
Շիրակ	Գյումրի	119250	119250	119350
	Արթիկ	63400	63400	63450
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130050	130050
	Կապան	100650	100800	100800
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84600	84800	84700
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90150	89400	90150
	Եղեգնաձոր	116750	116200	116750
	Զերմուկ	131300	130900	131300
Տավուշ	Դիլիջան	115450	115850	115800
	Իջևան	123200	123200	123250
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 0.2 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել է 3034 միավոր (2317.85 հա) հող, որից Երևանում՝ 215 միավոր (42.73 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 1804 միավոր (2185.57 հա), որից Երևանում՝ 21 միավոր (3.46 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 835 միավոր (75.33 հա), որից Երևանում՝ 88 միավոր (5.47 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 282 միավոր (17.36 հա), որից Երևանում՝ 98 միավոր (8.73 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 32 միավոր (6.78 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.65 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 15 միավոր (3.20 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 64 միավոր (26.20 հա), որից Երևանում՝ 2 միավոր (21.21 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (0.20 հա),
- անտառային հող՝ 1 միավոր (3.21 հա) մակերեսով Երևանում:

2017 թվականի առաջին եռամսյակում օտարված հողերից 2264 միավորի (2008.57 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 170 միավոր (14.08 հա), նվիրատվության գործարք՝ 742 միավոր (307.19 հա), որից Երևանում՝ 32 միավոր (28.06 հա) և փոխանակության գործարք՝ 28 միավոր (2.09 հա), որից Երևանում՝ 13 միավոր (0.59 հա):

Հանրապետությունում 2017 թվականի առաջին եռամսյակում 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 27.0 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 24.9 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 25.6 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1151.14 հա, որից 1140.37 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 18.6 %-ը կամ 421 միավորը (379.96 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 47 միավոր (1.04 հա), իսկ 80.3 %-ը կամ 1818 միավորը (1627.81 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 122 միավոր (13.00 հա): 2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 25 գործարք (1.81 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2017 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով

և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	15	0.38	32	0.66	11	2.31	5	0.65	59	4.29	47	5.74
Արագածոտն	41	68.85	1	0.15	6	0.32	3	0.12	177	116.84	0	0.00	33	2.99	0	0.00
Արարատ	20	24.57	1	0.03	12	0.77	8	0.16	218	96.80	3	0.71	96	8.48	11	0.22
Արմավիր	27	119.95	1	0.09	1	0.01	9	0.05	227	1020.43	1	0.01	98	10.56	4	0.04
Գեղարքունիք	14	4.88	1	0.39	5	0.60	6	0.12	49	58.12	4	0.26	40	4.99	8	0.24
Լոռի	5	10.88	1	0.10	3	0.01	12	3.41	119	77.11	1	0.02	7	0.54	9	0.24
Կոտայք	45	100.95	1	0.10	48	1.31	23	0.92	178	71.96	0	0.00	106	8.11	13	0.21
Շիրակ	3	14.01	0	0.00	10	0.53	1	0.08	94	71.00	0	0.00	38	4.31	7	0.17
Սյունիք	2	1.50	2	0.22	2	0.004	1	0.01	35	33.36	0	0.00	17	1.23	4	0.04
Վայոց ձոր	7	13.82	0	0.00	0	0.00	1	0.01	17	5.45	1	0.04	6	1.10	3	0.01
Տավուշ	13	4.56	6	2.69	3	0.53	17	0.41	46	16.75	0	0.00	11	0.87	8	0.26
Ընդամենը	177	363.97	14	3.77	105	4.46	113	5.95	1171	1570.13	15	1.69	511	47.47	114	7.17

Ստորև ներկայացված է 2017 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	34	0.27	0	0.00	11	0.10	23	0.17	13	0.76	0	0.00	0	0.00	4	0.28	9	0.48
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	51	69.44	41	68.85	1	0.15	6	0.32	3	0.12
Արարատ	7	0.06	1	0.03	3	0.02	3	0.01	33	21.27	19	20.37	0	0.00	9	0.75	5	0.15
Արմավիր	5	0.11	1	0.09	0	0.00	4	0.02	32	117.30	26	117.26	0	0.00	1	0.01	5	0.03
Գեղարքունիք	3	0.11	0	0.00	0	0.00	3	0.11	14	4.76	5	3.76	1	0.39	5	0.60	3	0.01
Լոռի	10	3.21	0	0.00	2	0.01	8	3.20	11	11.20	5	10.88	1	0.10	1	0.01	4	0.21
Կոտայք	22	0.27	0	0.00	18	0.25	4	0.02	94	102.88	44	100.82	1	0.10	30	1.07	19	0.89
Շիրակ	3	0.01	0	0.00	3	0.01	0	0.00	11	14.61	3	14.01	0	0.00	7	0.52	1	0.08
Սյունիք	2	0.004	0	0.00	2	0.004	0	0.00	5	1.73	2	1.50	2	0.22	0	0.00	1	0.01
Վայոց ձոր	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	6	13.81	6	13.81	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	4	0.01	0	0.00	0	0.00	4	0.01	35	8.18	13	4.56	6	2.69	3	0.53	13	0.40
Ընդամենը	91	4.064	2	0.12	39	0.39	50	3.55	305	365.94	164	355.82	12	3.65	66	4.09	63	2.38

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 13 գործարք (8.15 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի առաջին եռամսյակում, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 18.9 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 43.5 %-ով, իսկ մարզերում՝ 17.3 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 10.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 41.6 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 42.7 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 33.3 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	35	65.43	74.3	1540.0	654.8	89	52.82	365.0	12000.0	3360.8
Ապարան	5	2.37	70.1	430.1	250.1	10	4.73	86.5	2727.3	646.7
Թալին	1	1.05	70.9	70.9	70.9	54	26.48	93.6	5494.5	674.4
Ծաղկահովիտ						18	31.66	79.5	1000.0	428.3
Արարատի մարզ										
Արտաշատ	7	7.32	70.9	3045.0	408.0	104	35.42	335.1	10833.3	2698.1
Մասիս	7	1.18	125.2	1437.5	371.0	39	17.21	200.0	11904.8	3388.9
Վեդի	5	11.87	60.0	298.8	193.7	69	43.19	207.0	10795.1	2025.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	2.53	63.2	1522.7	460.5	100	42.91	294.3	9090.0	1463.4
Բաղրամյան	19	114.55	70.9	1250.0	357.8	79	953.24	90.6	2561.1	853.4
Վաղարշապատ	1	0.17	492.2	492.2	492.2	47	23.78	444.4	11764.7	2017.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						24	9.93	199.8	1875.0	529.3
Ճամբարակ	1	0.10	900.0	900.0	900.0			60.5	953.3	352.0
Մարտունի						4	0.39	51.1	2850.0	750.0
Սևան	2	3.01	180.0	180.0	180.0	1	7.86	52.2	2134.8	360.0
Վարդենիս	2	0.65	185.4	250.1	217.8	19	36.24	41.2	2575.1	357.8
Լոռու մարզ										
Ալավերդի	3	1.53	2442.0	5000.0	3311.0	13	9.68	170.4	6424.2	554.8
Գուգարք						10	2.83	234.6	6065.9	821.7
Սպիտակ	1	1.00	278.0	278.0	278.0	1	0.12	250.0	5555.5	675.0
Ստեփանավան	1	8.35	483.1	483.1	483.1	5	4.35	90.6	1686.6	410.0
Տաշիր						83	51.88	45.3	1384.4	189.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	22	49.84	90.7	2247.2	437.6	57	23.69	279.3	11942.7	3998.0
Եղվարդ	8	2.86	307.9	990.2	627.3	93	30.59	174.4	11971.8	2608.2
Հրազդան	14	48.12	101.0	862.5	510.7	23	15.71	130.5	10256.4	1065.7

Շիրակի մարզ										
Ախուրյան						17	17.86	252.0	1693.1	697.6
Ամասիա						2	4.80	40.9	261.0	143.5
Անի						17	16.36	110.6	546.9	467.6
Աշոցք						1	1.63	58.5	215.8	142.0
Արթիկ	3	14.01	295.2	965.4	739.5	54	29.79	79.4	1428.6	555.4
Սյունիքի մարզ										
Գորիս						10	7.08	92.6	1023.2	719.3
Կապան						5	6.41	120.0	841.6	462.5
Մեղրի						4	1.45	193.0	3000.0	832.0
Սիսիան	2	1.50	131.3	140.0	135.6	16	18.42	46.3	1977.4	551.8
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	6	13.81	31.2	392.5	96.7	15	4.53	125.0	10000.0	1781.9
Վայք						2	0.92	58.8	1430.7	630.0
Տավուշի մարզ										
Բերդ						15	5.60	213.3	3783.8	720.0
Իջևան	13	4.56	147.2	1903.5	366.0	15	3.21	267.5	9454.5	1611.7
Նոյեմբերյան						16	7.95	46.7	7368.4	998.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 թվականի առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մասվելագույն	Միջին			Նվազագույն	Մասվելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	576.0	248.6	615.8	432.2	25	20304.8	130.7	22200.0	2588.3
Ապարան	4	2584.0	268.5	280.0	272.5	4	5658.0	124.1	609.6	389.5
Թալին						1	249.8	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						2	2650.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	9	7471.4	379.8	851.6	691.1	28	26900.1	173.9	7140.3	902.5
Մասիս						45	35620.3	187.5	25000.0	1205.8
Վեդի						21	20435.0	126.1	5000.0	663.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	149.0	376.5	376.5	376.5	36	44296.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						3	3700.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						57	56605.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	6035.0	186.6	1084.3	683.8
Ճամբարակ						1	2373.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	5	6000.0	198.0	198.0	198.0	25	27676.0	119.3	5000.0	278.0
Սևան						3	4410.0	240.0	3110.4	347.0
Վարդենիս						5	9402.0	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	61.7	3063.2	3063.2	3063.2	1	800.0	114.3	1388.9	217.0
Գուգարք						4	2637.0	77.9	14083.3	1259.0

Սպիտակ						1	600.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						1	1400.0	88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	22	7832.7	245.8	5435.3	3230.6	59	43858.8	264.5	35353.5	1956.4
Եղվարդ	3	1635.6	1617.0	4564.5	2931.4	43	33500.5	173.6	27000.0	2853.7
Հրազդան	5	1207.5	1519.5	3234.0	2312.4	2	2089.0	117.7	34848.5	1318.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	812.1	259.5	376.4	317.9	15	19887.2	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						3	3851.4	67.9	180.6	218.0
Աշոցք						1	4727.0	40.8	144.0	65.0
Արթիկ	5	4366.4	183.0	580.8	501.2	19	14650.4	111.8	5000.0	217.5
Սյունիքի մարզ										
Գորիս						8	6534.2	112.2	1700.0	367.2
Կապան						1	600.0	67.9	2638.9	370.0
Մեղրի						1	1060.0	68.5	632.9	270.0
Սիսիան						7	4068.0	123.5	875.0	263.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	11029.9	96.7	7659.6	508.0
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	1914.0	75.8	810.0	131.0
Իջևան	3	5286.1	157.5	3000.0	869.2	7	6737.0	74.1	14423.1	496.7
Նոյեմբերյան						1	21.3	125.0	1948.1	259.0

2017 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1961 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.5 %-ը:

2017 թվականի առաջին եռամսյակում, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 1.7 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 8.3 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 78 բնակարանի, 88 անհատական բնակելի տան, 804 հասարակական նշանակության, 509 արտադրական նշանակության օբյեկտի, 457 միավոր հողի և 25 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 7 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 30.0 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 41.7 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 4467.98 հա հողից 1.31 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 4466.67 հա հողից 3453.78 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 969.64 հա արդյունաբերական օբյեկտի, 8.59 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 2364.23 հա, որից 1862.38 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4696 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ

իրավունքների պետական գրանցումների քանակի 13.1 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 34.4 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 23.6%-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (50.2 %), անհատական բնակելի տների (22.7 %), հասարակական նշանակության օբյեկտների (12.7 %) և հողերի (7.9 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2638 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 24.5 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 30.0 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 2637.40 հա հող, որից 19.62 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 60.6 %-ը կամ 1599.33 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.26 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 1501.41 հա, որից 1498.91 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 354 գործարք, որից 250-ը՝ Երևանում: 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 24.5 %-ով, ընդ որում Երևանում՝ 21.6 %-ով, մարզերում՝ 30.7 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել է 19.6 %-ով, ընդ որում Երևանում՝ 17.9 %-ով, մարզերում՝ 23.8 %-ով:

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 5090 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 27.1 %-ով, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 11.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.2 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (26.1 %):

◀◀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե